ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Քո բարի Հոգին ինձ պիտի առաջնորդի դեպի արդար երկիր

(Սաղմ., ՃԽԲ, 10):

Հարության տոնից հիսուն օր հետո
Հոգեգալստյան տոնն է:

Մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոս, Իր հրաշափառ հարությունից քառասուն օր անց համբարձվեց և ինն օր հրեշտակների ինը դասերում փառաբանվելուց հետո տասներորդ օրը նստեց Հոր աջ կողմում: Այնուհետև Սուրբ Հոգին հրե լեզուների տեսքով իջավ առաքյալների վրա, որպեսզի նրանք, Սուրբ Հոգու իմաստությունը կարոտով ու զգուշությամբ ընդունելով, Նրանով առաջնորդվեն դեպի Ավետյաց երկիր, ինչպես ասում է Դավիթ արքան. «Քո բարի Հոգին ինձ պիտի առաջնորդի դեպի արդար երկիր» (Սաղմ., ՃԽԲ, 10):

Այս տոնը տերունի տոների լրումն է: Ինչպես տնօրինության սկզբում նախ Սուրբ Հոգին իջավ Կույս Մարիամի մոտ, նույնպես և այսօր, Հիսուս ողջ տնօրինությունները կատարելուց և մարմնապես դեպի երկինք համբարձվելուց հետո, Սուրբ Հոգին եկավ Վերնատուն և աստվածային հրով զինեց առաքյալներին:

Այս տոնն ազատարար է և պարգևիչ, քանզի մեզ ազատեց ապականության ծառայությունից և վերադարձրեց մեր հայրենի ժառանգությունը՝ դրախտը: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ութ օր շարունակ նշում է Հոգեգալստյան տոնը, ինչպես Սուրբ Ծննդյան և Սուրբ Հարության տոներն են, սակայն այժմ տոնում ենք պահքով, քանի որ Քրիստոս մկրտվելուց հետո Հոգով տարվեց անապատ և այնտեղ քառասուն օր ու քառասուն գիշեր պահք պահեց:

Հինկտակարանյան բոլոր մարգարեները քարոզել են հոգեգալստյան մեծ և աստվածային իրադարձության մասին, բայց Նրա գալստյան մասին կատարելապես առաքյալներին Փրկիչը պատմեց Իր տնօրինական փրկարար չարչարանքներից առաջ, որպեսզի ճանաչեցնի Հոգու էությունը և մխիթարի նրանց վիշտը: Իսկ երբ մոտենում էին գրավոր Օրենքի հնանալու և Նոր Ուխտի հաստատվելու ժամերը, ասաց. «Եթե Ինձ սիրում եք, կպահեք Իմ պատվիրանները. և Ես պիտի աղաչեմ Հորը, և Նա մի այլ Մխիթարիչ պիտի տա ձեզ, որպեսզի հավիտյան ձեզ հետ բնակվի Ճշմարտության Հոգին» (Հովհ., ԺԴ, 15-17):

Աստծո Հոգին մտավոր է՝ բանական, կենդանի և կենդանացնող, որով զարդարվում և կառավարվում են բոլոր բանականները, երկնավորներն ու երկրավորները: Եվ Նա «Սուրբ» է կոչվում, որպեսզի զանազանվի հրեշտակների և մարդկանց հոգիներից: Թեպետ հրեշ-

տակները սրբություն ունեն, ինչպես և մեր հոգիները, որ Արարչից բարի ստեղծվեցին և բարի Աստծո պատկերն են, սակայն արարածների սրբությունը զանազանվում է Սուրբ Հոգու սրբությունից, քանի որ Աստծո Հոգին բնությամբ է սուրբ, իսկ հրեշտակները և մեր հոգիները՝ դրությամբ:

Ինչպես Աստված փակեց դրախտը բոցեղեն սրով և պահեց կենաց ծառի ճանապարհը, այնպես էլ այս օրը կրակի նմանությամբ Սուրբ Հոգին առաքվեց՝ պահելու և պարսպապատելու համար սուրբ Եկեղեցին, որպեսզի սատանան այնտեղ չմտնի և ավերածություն չգործի, քանզի սատանան Սուրբ Հոգու կրակից հույժ սարսափում է:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՀՐԱՇԱՓԱՌ ԷՋՔՆ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՎՐԱ

Այս օրվա համար գրված է. «Երբ Պենտեկոստեի օրերը լրացան, բոլորը միասիրտ, միատեղ էին»: *Առաքյալները, պահելով Տիրոջ հրամանը, այդ օրերին Երուսաղեմում էին գտնվում՝ ըստ այս խոսքի.* «Նստեցե՛ք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ երկնքից զորությամբ զգեստավորվեք» (Ղուկ., ԻԴ, 49): *Ըստ հրեական օրենքի՝ այդ օրը մեծ տոն էր, որի համար պետք է Երուսաղեմում ժողովվեին բոլոր հրեաները, այդ*

թվում նաև նրանք, ովքեր այնտեղ էին եղել Քրիստոսի խաչելության օրը, որպեսզի Նրա անարգանքը տեսնողները տեսնեին նաև Նրա փառքը: Առաքյալներն ու մնացյալ աշակերտները Վերնատանն էին հավաքվել, երբ Սուրբ Հոգին հրեղեն լեզուների տեսքով իջավ նրանց վրա, և սկսեցին տարբեր լեզուներով խոսել:

Առաքյալները խոսում էին մի լեզվով, սակայն լսողներից յուրաքանչյուրը լսում էր իր լեզվով: Եվ այդ հրաշքներն անհավատների համար էր լինում, և ոչ թե՝ առաքյալների (Սբ. Գրիգոր Նյուսացի):

Իսկ Գրիգոր Աստվածաբանն ասում է, որ երբ հարկ էր լինում որևէ լեզվով խոսելու, խոսում էին և ամեն մի ազգի քարոզում էին իրենց իսկ լեզվով, որպեսզի շնորհը լինի խոսողինը և ոչ թե լսողինը: Իսկ երբ Պետրոսը Երուսաղեմում Սուրբ Հոգու իջման օրը հրեաներին քարոզեց, ուր բոլոր ազգերից էլ հավաքվել էին, եբրայեցերեն քարոզեց, որովհետև բոլորն էլ հրեաներ էին, ինչպես Գործք Առաքելոցում է գրված. «Եվ կային Երուսաղեմում բնակվող հրեաներ, երկյուղած մարդիկ, եկած երկնքի տակ ապրող բոլոր ազգերից» (Գործք, Բ, 5): Եվ բոլոր ժողովուրդները լսեցին օրհնություն ու փառաբանություն նրանցից, ովքեր Վերնատանն էին հավաքվել, ու բոլոր լեզուներով Աստված էր օրհնվում:

ՊԵՆՏԵԿՈՍՏԵ

«Պենտեկոստե» հունարեն բառ է, որը թարգմանվում է հինգերորդ: «Պենտ» նշանակում է հինգ, իսկ «կոստե»՝ գլուխ:

Ստույգ նշանակությամբ «պենտան» հունարենից թարգմանվում է հիսուն, իսկ «կոստեն»՝ տասնյակ: Եվ հինգ տասը հիսունն է, այսինքն՝ հիսնյակ: Եվ Քրիստոսի Հարությունից մինչև Սուրբ Հոգու գալուստը հիսուն օր է:

ՏՈՆԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Այժմ տեսնենք, թե երբ և որտեղից սկսվեց տոնվել Պենտեկոստեն: Աստվածաշնչում գրված է, որ հրեաների՝ Եգիպտոսից ելնելուց հիսուն օր հետո Սինա լեռան վրա Աստված երևաց ժողովրդին ու Մովսեսի միջոցով տվեց գրավոր Օրենքը, ապա ուխտ հաստատեց Իսրայելի ժողովրդի հետ՝ կարգ սահմանելով այս օրը տոնել: Սա տոնն է նաև Նոր Եկեղեցու, որովհետև այս օրը նոր ժողովուրդն արժանացավ Սուրբ Հոգու տեսությանը, քանզի Նա, Ով բոլորիս Աստվածն է, իջավ առաքյալների վրա և առաքյալներին զանազան շնորհներ պարգևեց՝ դրանով լուծարելով նախկինում կայացված հետևյալ վճիռը. «Տեր Աստված ասաց. «Իմ Հոգին հավիտյան թող չմնա այդ մարդկանց մեջ» (Ծննդ., Զ, 3):

Հնում այս տոնին հավաքվում էր ամբողջ ժողովուրդը, քանի որ, ըստ օրենքի, տարին երեք անգամ պետք է երևալ Աստծուն. մեկը՝ Զատկին, մյուսը՝ Հոգեգալուստին և մեկն էլ՝ Քավության տոնին: Արդ ինչպես Զատկին Տերը խաչվեց, և Նրան տեսավ ողջ ժողովուրդը, նույնպես և այս օրը երևաց Սուրբ Հոգին, որպեսզի ժողովուրդը տեսնի, և ամոթահար լինեն նրանք, ովքեր հակառակվեցին Քրիստոսին: Քանի որ խաչի պատճառով շատերը գայթակղվեցին, մանավանդ աշակերտները, դրա համար այս օրը երևաց Սուրբ Հոգին, որպեսզի հաստատի գայթակղվածներին:

Հոգին զորացնում է քահանայապետի ձեռքը շնորհաբաշխության համար, քահանաներին՝ նվիրագործության, և սարկավագներին՝ սուրբ Եկեղեցու սպասավորության համար: Նրանով են զինվում նահատակները, քաջանում այրերը, արիանում կանայք: Նրա զորությամբ է խաչաձև փայտից սքանչելիքներ և սրբերի մասունքներից բժշկություն բխում բոլոր ախտերի դեմ: Ամբողջ երկիրը լի է Նրա ողորմությամբ, և օդը մաքրվեց Նրա իջնելով:

Նա մեզ հետ է ամեն օր,

և մեր ունեցած ամեն ինչը Նրա պարգևն է.

ամեն:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում Հոգեգալստյան տոնը կատարվում է մայիսի 10-ից հունիսի 13-ը ձգվող ժամանակահատվածի համապատասխան կիրակի օրը:

Հոգի՛ Աստուծոյ, Աստուած ճշմարիտ,
որ իջար Յորդանան և Վերնատուն
և լուսավորեցիր ինձ
սուրբ ավազանի մկրտութեամբ,
մեղայ երկնքի և Քո առաջ,
մաքրիր ինձ վերստին Քո աստուածային հրով,
ինչպես հրեղէն լեզուներով՝
սուրբ առաքեալներին.
և ողորմիր Քո արարածներին
և ինձ՝ բազմամեղիս:

(Սբ. Ներսես Շնորհալի)

Արսեն սարկավագ Բարսեղյան

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ